ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Նվեր Բադալյանը, Զոյա Մարտիրոսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ռուբեն Ոսկանյանը, Արտաշ Արտաշյանը, Շուշանիկ Դանիելյանը, Արամ Սիմոնյանը, Գարեգին Եղյանը**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դավիթ Օհանյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Հաստատել 26-ը փետրվարի 2021թ. թիվ 2 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝
2.Եղեգիս համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,
3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2018-2022 թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի՝ 2020 թվականի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին,
4.Եղեգիս համայնքի 2020 թվականի երկրորդ կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին,
5.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրային հայտեր ներկայացնելու մասին,

…եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին,
…Քաղաքացի Տիգրան Մելիքի Խուդոյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
9.Քաղաքացի Ռուդիկ Ռոբերտի Հակոբյանի սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
10.Քաղաքացի Բադալ Մարտինի Սարգսյանի սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
11.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.382հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,
12.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.20267հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,
13.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.25216հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,
14.Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու մասին,
15.Եղեգիս համայնքի Սալլի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու մասին,
16.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու մասին,
17.Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին,
18.Եղեգիս համայնքի ավագանու 29/01/2021թ. թիվ 03Ա որոշման հավելվածի մեջ փոփոխություն կատարելու մասին,
19.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,
20.Քաղաքացի Բենիամին Լյովայի Նազարյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
21.Ավագանու 29/01/2021թ. թիվ06Ա որոշման հիման մեջ լրացում կատարելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 08 Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՌՈՒԲԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Հաստատել ակտը Զորի մարզի Եղեգիս համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման

...մ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 Թ.Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒՇԱՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2018-2022թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի՝
2020 թվականի իրականացման հաշվետվությունը համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒՇԱՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Հաստատել Եղեգիս համայնքի 2020 թվականի երկրորդ կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ-7 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11Ա/

Լսեցին

ՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԱՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքի կողմից զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ ներկայացվող հետևյալ հայտերը՝
1.Մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ /հետաձգված, նախատեսված Շատին բնակավայրում Եղեգիս համայնքի համար /սոցիալական զարգացման ծրագիր/,

2. Ոռոգման խողովակաշարի կառուցում՝ Վարդահովիտ, Հերմոն, Սալլի /հետաձգված/ և Աղնջաձոր, Քարագլուխ, Թառաթումբ, Շատին բնակավայրերում /տնտեսական զարգացման ծրագիր/,
3.Փողոցային լուսավորության անցկացում՝ Արտաբույնք, Շատին և Թառաթումբ բնակավայրերում /սոցիալական զարգացման ծրագիր/,
4. Խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում, ՕԿՋ-ների վերանորոգում՝ Հորբատեղ, Գողթանիկ, Թառաթումբ, Հորս, Շատին, Եղեգիս և Սալլի բնակավայրերում /տնտեսական զարգացման ծրագիր/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12Ա/

Լսեցին
***ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 22/12/2020թ. թիվ 88Ն որոշման կից հավելված 1-ի 17-րդ մասի 1/-ին կետով

***ավագանին որոշում է՝***

Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ ԿԵՀ ԽՄ-ի) ձևավորման նպատակով առաջադրել ավագանու անդամ Զոյա Հայրիկի Մարտիրոսյանի

ղմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13Ա/

Լսեցին
***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Եղեգիսի համայնքապետարանի միջոցներով 2021 թվականին ձեռք բերված ստորև ներկայացված գույքը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

- համակարգչի պրոցեսոր /CPU I3 9100, RAM 8GB, SSD 240GB, DVD RW /, 2 հատ 460 000 ՀՀ դրամ
- բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, CANON MF 3010 1 հատ, 145 000 ՀՀ դրամ
- ստեղնաշար GENUS SLIM STAR 130X, 1 հատ, 6000 ՀՀ դրամ
- հիշող սարք RAM4 GB 1 հատ, 10 000 ՀՀ դրամ
- անխափանման սնուցման սարք ERZOL 850W, 2 հատ 65 000ՀՀ դրամ
- կոշտ սկավառակակիր SSD 120 GB, 1 հատ, 10 000 ՀՀ դրամ

**ԸՆԴԱՄԵՆԸ 696 000 ՀՀ դրամ**

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14Ա/

Լսեցին
***ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԼԻՔԻ ԽՈՒԴՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ԵՂՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Տիգրան Մելիքի Խուդոյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /0,12հա մակերեսով, 10-021-0114-0046 կադաստրային ծածկագրով/ հողը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման /հանգստի համար նախատեսված՝ հյուրատուն-ժամանցի կենտրոն կառուցելու համար/:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15 Ա/

Լսեցին

***ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԴԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ԵՂՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

*ավագանին որոշում է՝*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Ռուդիկ Ռոբերտի Հակոբյանի սեփականություն հանդիսացող՝

ա/գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքից /0,33295հա մակերեսով, 10-035-0254-0028 կադաստրային ծածկագրով/ առանձնացված 0.14596հա հողատարածքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման /ավտոտեխ սպասարկում կառուցելու համար/:

բ/գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքից /0,69037հա մակերեսով, 10-035-0255-0018 կադաստրային ծածկագրով/ առանձնացված 0.03187հա հողատարածքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական

Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16 Ա/

Լսեցին

***ՔԱՂԱՔԱՑԻ ԲԱԴԱԼ ՄԱՐՏԻՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*ԶԵկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով, հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը

ավագանին որոշում է՝

1.Սալլի բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Բադալ Մարտինի Սարգսյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից / կադաստրային ծածկագիր 10-038-0106-0121, մակերեսը՝ 1.20264հա/ առանձնացված հողամասերի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝

ա/0.02211հա մակերեսով հողամասի վրա պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության համար շինության կառուցման նպատակով,
բ/0.09հա մակերեսով հողամասի վրա անասնաշենքի կառուցման նպատակով:

2. Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17 Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.382ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*ԶԵկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/*

...շմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և ...րմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*ավագանին որոշում է՝*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0231-0067, մակերեսը՝ 0,382հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.20267ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*ավագանին որոշում է՝*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0228-0149, մակերեսը՝ 0,20267հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.25216ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0242-0045, մակերեսը՝ 0,25216հա/ աճուրդով օտարելու մասին:
2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:
3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20Ա/

Լսեցին
***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՌԱԹՈՒՄԲ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը /կադաստրային ծածկագիր՝ 10-024-0104-0009, մակերեսը՝ 0,08296հա և կադաստրային ծածկագիր՝ 10-024-0104-0008, մակերեսը՝ 0,38704հա / աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:
3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21Ա/

Լսեցին

*/Զեկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Սալլի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը /կադաստրային ծածկագիր՝ 10-038-0116-0031, մակերեսը՝ 0,22695հա և կադաստրային ծածկագիր՝ 10-038-0106-0122, մակերեսը՝ 0,55հա/ և հնդավոր հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-038-0116-0032, մակերեսը՝ 0,376հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 110%-ի չափով:
3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0228-0150, մակերեսը՝ 0,11326հա/ և այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0231-0071, մակերեսը՝ 0,10729հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:
3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-0 Դեմ-3 Ձեռնպահ-2

...ացին

**...ՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ և վարելահող /կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0021, մակերեսը՝ 6,6463հա/ հողատեսքերը մրցութային կարգով 5 /հինգ/ տարի ժամկետով տրամադրելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 110 /մեկ հարյուր տաս/ տոկոսը:

3.Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24Ա/

Լսեցին

**ԱՎԱԳԱՆՈՒ 29/01/2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 03Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «2021 թվականի համար Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 03Ա որոշման կից հավելվածը շարադրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

...ոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն, 24/01/2020թ. թիվ 11Ա որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 31/08/2018թ. թիվ 57Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26Ա/

Լսեցին

***ՔԱՂԱՔԱՑԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԼՅՈՎԱՅԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ԵՂՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Բենիամին Լյովայի Նազարյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հնդավոր հողատեսքը /0,225հա մակերեսով, 10-035-0254-0007 կադաստրային ծածկագրով/ հողը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման /բնակելի տուն կառուցելու համար/:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել

…շումն ընդունված է. /կցվում է որոշում N 27Ա/

…սեցին

***ԱՎԱԳԱՆՈՒ 29/01/2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 06Ա ՈՐՈՇՄԱՆ ՀՂՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏԱԾ ԱՐՏԱԾՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով

***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի կառավարման ամենամյա ծրագիրը հաստատելու մասին» թիվ 06Ա որոշման հղման մեջ <<43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի>> բառերից առաջ ավելացնել <<18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և>> բառերը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Համայնքի ղեկավարի տեղակալ*

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ

*[illegible]*